ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 8, 1965 Общественные науки

Ա. Հ. Ադամյան

ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր պետական մատենադարանի արխիվային ֆոնդերում պահվում են հայ նշանավոր ազգագրագետ Սրվանդ Լալայանի՝ բանասերներ Կյուրեղ Սրապյանին, Գարեգին Հովսեփյանին, Դալուստ Տեր-Մկրտչյանին, Մեսրոպ Մաքսուդյանին և Մեսրոպ Տեր-Հակոբյանին 1886—1927 թթ. գրած նամակները, որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում Ե. Լալայանի կյանքի ու գիտական գործունեության վերաբերյալ։

Ե. Լալայանը 1885 թ. ավարտելով Ներսիսյան դպրոցը ցանկանում էր գնալ Շվեյցարիա՝ բարձրագույն կրթություն ստանալու, սակայն նյութական սուղ պայմանները թույլ չեն տալիս նրան անմիջապես իրագործելու իր նպատակը։ Ստիպված՝ նա ուսուցչության հետ միասին կատարում է նաև սրբագրական աշխատանք։ Հրատարակվող վավերագրերից ուշագրավ է 1886 թ. օգոստոսի 16-ին Կ. Սրապյանին (1844—1895 թթ.) գրած նամակը, որով Լալայանը հաղորդում է, որ ինքը կատարում է նրա տպագրվող գրքի սրբագրությունը։

Հայտնի է, որ Ե. Լալայանի անմիջական ջանքերի շնորհիվ 1896 թ. հիմնադրվում է հայ ազգագրության, բանահյուսության, հնագիտության և գիտության այլ բնագավառների համար հարուստ նյութեր պարունակող հանրածանոթ «Ազգագրական հանդես» պարբերականը, որի հրատարակությունը շարունակվում է մինչև 1916 թ.։ Հանդեսը հրատարակելու ժամանակ Ե. Լալայանը նյութական մեծ դժվարությունների է հանդիպում, բայց համառորեն հաղթահարելով դրանք, նա մեծ ջանասիրությամբ շարունակում է իր սկսած կարևոր գործը։ Հանդեսի հրատարակության ամբողջ դժվարությունը՝ պատկերացնելու տեսակետից կարևոր է Ե. Լալայանի 1900 թ. ապրիլի 27-ին, Գ. Հովսեփյանին (1867—1952 թթ.) գրած նամակը, ուր նա հաղորդում է, որ «Ազգագրական հանդեսը» նյութական ծանր պայմանների մեջ է գտնվում և խնդրում է օգնել իրեն՝ տարածելու հանդեսը, քանի որ այն կանգնած է փակման վտանգի առաջ։ Հանդեսի նյութերի հավաքման և մշակման ուղղությամբ Ե. Լալայանի գործունեության համար պարզ պատկերացում է տալիս Գ. Հովսեփյանին հղած 1905 թ. հունվարի 19-ի, 1908 թ. հունվարի 2-ի, 1908 թ. սեպտեմբերի 9-ի և անթվակիր երկու նամակները, որոնց մեջ Ե. Լալայանը հայտնում է Գ. Հովսեփյանի աշխատությունների հրատարակությունների ընթացքի, ապա բրդական հարսանիքի և այլ թեմաների վերաբերյալ նրա ուղարկած նյութերը տպագրելու մասին։ Մի այլ նամակից երևում է, որ Ե. Լալայանը 1901 թ. նոյեմբերի 23-ին դիմել է անվանի հայագետ Գ. Տեր-Մկրտչյանին՝ խնդրելով դրախոսել Ղ. Ալիշանի տեղագրական և ազգագրական աշխատությունները և գրել վերջինիս կենսագրությունը։

Ե. Լալայանը նամակագրական կապ է ունեցել էջմիածնի միաբանության այն անդամների հետ, որոնք զբաղվել են ազգագրությամբ, գրականագիտությամբ, լեզվաբանությամբ ու հայագիտական մյուս ճյուղերով և նրանց պատվիրել է հոդվածներ գրել հանդեսի համար։ Այսպես, 1913 թ. դեկտեմբերի 14-ին նա դիմել է Մ. Մաքսուդյանին (1876—1917 թթ.) և խնդրել գրախոսել Հ. Աճառյանի «Հայերեն գավառական բառարանը», որը տպագրվել էր «Էմինյան ազգագրական ժողովածուում»։ 1914 թ. գրած նամակով նա դարձյալ Մաքսուդյանից մի հոդված է պահանջել, իսկ 1915 թ. հայտնել է, որ ինքը ժամանակին մի ձեռագրից ընդօրինակել է Աղթամարի կաթողիկոսության պատմությունը, որը շուտով հրատարակվելու է։

«Ազգագրական հանդեսի» հրատարակման գործը ավելի հաջող վարելու նպատակով կազմվել է խմբագրական հանձնաժողով, որի կազմի մեջ մտել են ազգագրական, և առհասարակ բանասիրական կարողություններ ունեցող այն գործիչները, որոնք կապված են եղել «Ազգագրական հանդեսի» հետ։ Մատենադարանի արխիվում պահվում է Ե. Լալայանի՝ 1916 թ. մարտի

---

1 Խոսքը վերաբերում է Կ. Սրապյանի «Ողջախոհութիւն ուղիղ ճանապարհ աճելութեան» վերնագրով գրքին։

14-ին, Ս. Տեր-Հակոբյանին (1856—1937 թթ.) ուղղած մի գրությունը՝ Հայոց ազգագրական ընկերության խմբագրական մասնաժողովի անգամ ընտրվելու մասին։

Ե. Լալայանը տարիներ շարունակ շրջել է Հայաստանի շրջանները, հավաքել ազգագրական նյութեր։ Այդ տեսակետից ուշագրավ է 1916 թ. փետրվարի 10-ին Ս. Տեր-Հակոբյանին գրած նամակը, որով հաղորդում է, որ ինքն իր խմբով գնալու է Նոր Բայազետի (այժմ՝ Կամո) կամ Գանձակի (այժմ՝ Կիրովաբադ) գավառները՝ նյութեր հավաքելու։ Այդ նամակով նա խնդրել է իրեն տեղեկացնել Վանից Սմբատ Տեր-Ավետիսյանի ուղարկած 1118 ձեռագրերի էջմիածին հասնելու և նկարիչ Վ. Սուրենյանցի աշխատանքների մասին։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ե. Լալայանն ընկնում է նյութական ծանր վիճակի մեջ, որի պատճառով ստիպված է լինում 1916 թ. դադարեցնել նշված հանդեսի հրատարակությունը։

Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելուց հետո Ե. Լալայանի առաջ լայն ասպարեզ է բացվում՝ վերսկսելու իր այնքան սիրած հետազոտական գործունեությունը։

1921 թ., երբ Թիֆլիսից Երևան է փոխադրվում ազգագրական թանգարանը, նրա վարիչ է նշանակվում Ս. Լալայանը։

1927 թ. հունվարի 12-ին Ս. Տեր-Հակոբյանին գրած նամակից երևում է, որ Ե. Լալայանը աշխատել է հայկական տարազների ժողովածուի վրա, իսկ 1929 թ. մարտի 3-ի նամակից պարզվում է, որ նա այդ տարիներին զբաղված է եղել Հայաստանի շրջաններում իր կատարած պեղումների նյութերի մշակմամբ և հրատարակմամբ։ Այդ ուսումնասիրություններից մեկը՝ «Դամբանների պեղումները Խորհրդային Հայաստանում» վերնագրով ապագրվել է 1931 թ.։

Ե. Լալայանի՝ ստորև տպագրված նամակները լույս են սփռում նրա կենսագրության և բանահավաքչական գործունեության մի քանի անհայտ կողմերի վրա։

Երվանդ Լալայանի նամակը էջմիածնի միաբանության անդամ, լեզվաբան Կյուրեղ Սրապյանին.

Ստացյալ ի 21 օգոստոս 1886

Գերապատիվ Հայր

Մեծ(ապատիվ) Պ. Փ. Վարդանյանի գրության համաձայն, որ վկայում էր Ձեր հաճությունը՝ սրբագրելու Ձեր երկասիրության տպագրական թերթերը, վաղուց արդեն գործի եմ սկսած և ոչինչ աշխատանք չեմ խնայած անսխալ դուրս բերելու։

Մանրակրկիտ հետևում եմ Ձեր ձեռագրին, սակայն մի քանի բառերի զանազանաձև գործածությունը իմ մեջ կասկած է հարուցանում, թե մի գուցե գրչի սխալներ սպրտած լինեն։ Օր(ինակ) Աբրահամ, Աբրաամ, Աբրամ, Կային, Կայեն և այլն։

Չգիտեմ ինչպես կկամենայիք, որ սրբագրեի՝ կետ առ կետ հետևել տետրին, թե այլ ձևի գործածություններն էլ վերածել ընդհանուր գործածություններին։

Ուղիղ հաշվից երևում է, որ ամբողջ գրությունը 11 տպագրական թերթից ավելի չի լինիլ։

Առանձին ծրարով ուղարկում եմ Ձեզ մաքուր տպվածից երկու մամուլ (32 երես մի թերթ)։ Երկու մամուլ էլ պատրաստ է տպագրության։

Համբուրելով Ձերդ Գերապատվության ս. աջը՝

մնամ խ. ծ. Երվանդ Լալայանց

1886 թ. օգոստոս 16-ն.
Թիֆլիս

Հայկական ՍՍՌ Մատենադարան,
Կյուրեղ Սրապյանի արխիվ, թղթ. 82ա, վավ. 174։

Երվանդ Լալայանի նամակը Էջմիածնի միաբանության անդամ, հայագետ Գարեգին Հովսեփյանին.

Սրբազան Հայր

Ի նկատի ունենալով, որ Ձերդ բարձր սրբազնություն Ազգագրական Հանդեսի երևալուց դեռ շատ առաջ ցույց եք տվել Ձեր համակրությունը դեպի ազգագրական նյութերը և չեք խնայել Ձեր ջանքերը նրանց կորստից ազատելու, պատիվ եմ համարում ինձ դիմել Ձերդ Բարձր Սրբազնության և խնդրել Ձեր աջակցությունը «Ազգագրական Հանդեսի» հրատարակությունը շարունակելու և կարելուն չափ կատարելագործելու։ «Ազգագրական Հանդեսի» էջերը ուրախությամբ բացվում են Ձեր Սրբազնության առաջ և ես միանգամայն հույս ունեմ, որ Դուք կաշխատեք նաև տարածել, որովհետև ստիպված եմ դադարեցնել, եթե որ նպաստողներ չլինեն. յուրաքանչյուր գրքում 500 ռ. վնասվելով, արդեն 3000 ռ. դեֆիցիտ ունեմ, որի կեսը դեռ ես պարտ եմ տպարանին, թղթավաճառին և ուրիշներին։ Դիմելով Ձերդ Բարձր Սրբազնության և մի երկու այլ անձերի, ես վերջին փորձն եմ անում ազատել Հանդեսը դադարելու վտանգից. Ձեր համակրությունից և աջակցությունից է կախված նրա հարատևությունն ու կատարելագործությունը։

Բարեհաճեցեք, խնդրեմ, ընդունելու խորին հարգանքիս կատարյալ հավաստիքը՝

Որով մնամ

Ձերդ Բարձր Սրբազնության

խորին հարգանոք Երվանդ Լալայան

1900 թ. ապրիլ 27,
Թիֆլիս

Հայկական ՍՍՌ Մատենադարան, արխիվային բաժին, կաթ. դիվան, թղթ. 237, վավ. 88։

* * *

Ազգագրական
Հրատարակչական
ընկերություն
խմբագրական մասնաժողով
19 հուն. 1905 ամի
թ. ա.
Թիֆլիս

Արժանապատիվ Հայր

Լրագրական կտորների ժողովածուիս մեջ պատահմամբ գտնելով Ձեր խոստացած հոդվածի վերաբերյալ մի հատված, կարևոր համարեցի ուղարկելու ձեզ, թերևս օգտավետ լինի։

Շատ լավ կլիներ, որ նախքան Ձեր հոդվածը պատրաստելը, մոգայիկի պատկերը ուղարկեիք, որ տեսնեինք թե կարելի՞ է վայելուչ պատկեր պատրաստել տալ։

Ընդունեցեք, խնդրեմ, խորին հարգանքիս կատարյալ հավաստիքը։

Մնամ Ձեզ խ. հարգ. Ն. Լալայան

Հայկական ՍՍՌ Մատենադարան,
Դ. Հովսեփյանի արխիվ, թղթ. 95. վավ. 87։

Հայոց
Ազգագրական
ընկերություն
խմբագրական մասնաժողով
2 հունվարի 1908 ամի.
Թիֆլիս

Գերապատիվ Հայր

Շնորհավորելով Ձեր նոր տարին և բարեմաղթելով ամենայն բարիք, նեբողություն եմ խնդրում, որ այսքան ուշ եմ կատարում Ձեր խնդիրը, թեև մեղավորը ես չեմ. պ. Լոպատինսկին երկար ժամանակ բացակա էր Թիֆլիսից՝ Քութայիսում քննություն կատարելու պատճառով, հետո էլ տկարության պատճառով չէր ընդունում: Վերջապես մի քանի անդամ փորձելուց ետ, կարողացա տեսնվիլ և հայտնել Ձեր ասածները: Նա պատասխանեց, որ այս հունվարի կեսից կտա շարելու և սրբագրությունն էլ խոստացավ ուղարկել Ձեզ:

Ընդունեցեք, խնդրեմ, խորին հարգանքիս կատարյալ հավաստիքը՝

Ձեզ խ. հարգ. Ե. Լալայան

Հայկական ՍՍՌ Մատենադարան, արխիվային բաժին,
Գ. Հովսեփյանի արխիվ. թղթ. 95, վավ. 147:

* * *

Արժանապատիվ Հայր

Ձեր երկու նամակն էլ ստացել եմ, մինը՝ Բաշ-Նորաշենում, շատ ուշ, սեպտեմբերի 2-ին, իսկ մյուսը Թիֆլիսում, երբ կրկին պատրաստվում էի ճանապարհորդելու: Առանց հոդվածը տեսնելու, այսինքն առանց գիտենալու թե ինչպիսի մանրամասնությամբ նկարագրված է քրդական հարսանիքը, հետևապես որքան մասնագիտական բնույթ է կրում, չեմ կարող ասել, թե կարո՞ղ ենք տպագրել թե ոչ: Այս միայն կասեմ, որ եթե չափազանց մանրամասն լինի և նորություններ պարունակե, անշուշտ կարող ենք տպագրել, այն էլ ոչ այս գրքում, այլ հետևյալ: Այս գրքի համար շատ կխնդրեի, որ հաճեիք մի գրախոսական ուղարկել կամ Դիվան Հայոց պատմության վերջին գրքի և կամ մի այլ աշխատության մասին:

Ընդունեցեք, խնդրեմ, խորին հարգանքիս կատարյալ հավաստիքը:

Ձեզ խ. հարգանքով Ե. Լալայան

1908 5/9
Նոր-Բայազետ

Հայկական ՍՍՌ Մատենադարան, արխիվային բաժին,
Գ. Հովսեփյանի արխիվ. թղթ. 95, վավ. 177:

* * *

Արժանապատիվ Հայր

Ձեր խնդիրը կատարեցի, ամսիս 9-ին Տ. Հ. Մարտիրոսյանի հետ ուղարկեցի բոլոր 34 հատ դիապոզիտիվները, միայն չեմ թաղցնում, որ դժգոհ եմ, որ միևնույն դասախոսություններ պիտի կարդաք այդտեղ, թարմությունը կորցնում է, մանավանդ երբ լրագրության մեջ ես այդ մասին գրվում է: Եթե, հի-

բավի, անպատճառ պիտի կարդաք, գոնե անունը փոխեցեք, թերևս նկատելի չլինի։

Քանի որ ձեր դասախոսության մուտքը մեր սովորական դասախոսությունների նման ձրի չի լինելու, այլ վճարով, պետք է որ թարմություն ներկայացնի։ Ես կգրեմ թե որ օրը հարմար կլինի ձեր դասախոսության, թերևս ամսիս 19-ին, կարո՞ղ եք գալ։

Ընդունեցեք, խնդրեմ, խորին հարգանքիս կատարյալ հավաստիքը։

Ձեզ խ. հարգ. Ե. Լալայան

(Անթվակիր)

Հայկական ՍՍՌ Մատենադարան,
Գ. Հովսեփյանի արխիվ, թղթ. 96, վավ. 9։

*

Դերապատիվ Հայր

Ձեր հոդվածի վերաբերությամբ Ազգագրական ընկերության խորհուրդը որոշեց ընդունել Ձեր առաջարկը՝ այն է ստանալ ձեզանից 50 ռուբլի քլիշաների համար և մնացած 50 ռուբլին էլ Ընկերությունիդ ծախսել, թույլ տալով Ձեզ ապագային օգտվելու այդ քլիշաներից։ Արդ քանի որ այժմ փոխել եք դուք Ձեր մտադրությունը և ցանկանում եք առանձին գրքով հրատարակել՝ ես առաջարկում եմ Ձեզ տալ մեզ քլիշաների բոլոր ծախսը, մոտ 100 ռուբլի և ստանալ մեզանից 400 օրինակ արտատպություն, թվահամարները փոխված, առանձին կազմած։

Որոշված է նաև ձեր հոդվածը զետեղել Ազգ. Հանդեսի 21 գրքում, որ լույս է տեսնելու ամենաուշը փետրվարի վերջում, հետևապես և եթե համաձայն եք խորհրդի որոշման, որ Ձեր առաջարկն է և կամ իմ առաջարկության, շտապեցեք, խնդրեմ, ուղարկելու ձեր հոդվածը և ապա 50 կամ 100 ռուբլի։

Շատ շնորհակալ կլինեինք, եթե որ հաճեիք եպիսկոպոսական ձեռնադրության նկարագրությունը ուղարկել մինչև դեկտեմբերի 1-ը, այլապես անկարող կլինենք տպագրել այս 20-րդ գրքում, որովհետև սա անշուշտ լույս է տեսնելու դեկտեմբերի կեսին։

Ընդունեցեք, խնդրեմ, խորին հարգանքիս կատարյալ հավաստիքը։

Ձեզ խ. հարգանոք Ե. Լալայան

(Անթվակիր)

Հայկական ՍՍՌ Մատենադարան,
Գ. Հովսեփյանի արխիվ, թղթ. 96, վավ. 10։

* * *

Գ. Հովսեփյանին տրված ստացականը

Բարձրապատիվ հայր Գարեգին վարդապետ Հովսեփյանից ստացա մի հազար ռուբլի (1000 ռ.), ազգագրական բանահյուսական նյութեր ժողովելու նպատակով։

Ե. Լալայան

1915 թ. 30 դեկտ. էջմիածին

Հայկական ՍՍՌ Մատենադարան, արխիվային բաժին,
Կաթ. դիվան, թղթ. 238, վավ. 158բ։

Երվանդ Լալայանի նամակը էջմիածնի միաբանության անդամ, հայագետ Գալուստ Տեր-Մկրտչյանին.

Ազգագրական
Հրատարակչական
ընկերություն
Խմբագրություն Ազգագր. Հանդեսի
23 նոյեմբ. 1901 ամի
թ. ...
Թիֆլիս

Վաղեմի բարեկամ պ. Գալուստ

Մի խնդրով անհանգստացնելու եմ Ձեզ, հուսամ թե կկատարեք։ Հայր Ալիշանի գրվածներին քաջ ծանոթ Ձեզ միայն համարելով, խնդրում ենք բարեհաճեք մի քննադատական, մասամբ և կենսագրական հոդված գրել նրա գուտ տեղագրական-պատմական-ազգագրական երկերի մասին։ Ուզում ենք Հանդեսիս 7-րդ դիրքը նրա հիշատակին նվիրել և պատկերի հետ տալ նաև այդ քննադատությունը։ Իբր վարձատրություն խմբագրական մասնաժողովս որոշել է տալ թերթին 48 (քառասուն և ութ) ռուբլի, կամ յուրաքանչյուր երեսի համար մի ռուբլի հիսուն կոպեկ։ Եվ որովհետև Հանդեսը լույս է տեսնելու դեկտեմբերի 20—25-ին, ուստի հոդվածը պիտի ստանանք մինչև դեկտ. 15-ը։

Շատ և շատ խնդրում եմ, որ չմերժեք ինչպես իմ, այնպես և մասնաժողովիս խնդիրը, այլապես մեզ շատ ծանր դրության մեջ դրած կլինեք, որովհետև, կրկնում եմ, միա՛յն Ձեզ ենք համարում ձեռնահաս շատ շուտով այդպիսի մի քննադատություն գրելու, որովհետև արդեն վաղուց ուսումնասիրած եք Ալիշանի երկերը։

Հայտնելով Ձեզ խորին հարգանքիս կատարյալ հավաստիքը՝

Մնամ Ձեզ խ. հարգ. Ե. Լալայան

Հ. Գ. Հույս ունեմ, որ երկտողով կմիամտացնեք մեզ, ներեցեք, որ սաստիկ շտապելով՝ կանոնավոր չեղավ նամակս։

Նույն։

Հայկական ՍՍՌ Մատենադարան, արխիվային բաժին,
Գալուստ Տեր-Մկրտչյանի արխիվ, թղթ. 24, վավ. 39։

* * *

Մեծարգո բարեկամ

Խնդրում եմ բարեհաճեք շտապել և ուղարկել ինձ «Ս. Սարգիսի մասին» Ձեր գրած հոդվածը՝ Հանդեսի մեջ դետեղելու։ Մեծահույս եմ, որ պիտի կատարեք խնդիրս, ուստի և նախապես հայտնում եմ Ձեզ իմ խորին շնորհակալության հետ՝ անձնվիրության հավաստիքը։

Ձեզ խ. հարգ. Ե. Լալայան

27 սեպտ., 1902 թ.

Հայկական ՍՍՌ Մատենադարան,
Գալուստ Տեր-Մկրտչյանի արխիվ, թղթ. 24, վավ. 40։

Երվանդ Լալայանի նամակը Էջմիածնի միաբանության անդամ, լեզվաբան Մեսրոպ Մաքսուդյանին.

Հայր սուրբ

Խնդրում եմ հաճիք մի գրախոսական գրել Էմինյան Ազգագրական ժողովածուի նոր լույս տեսած Թ. (IX) գրքի՝ Աճառյանի «Հայերեն գավառական բառարանի» մասին, և որքան կարելի է շուտ, մինչև հունվար։

Ընդունեցեք խնդրեմ, խորին հարգանքիս կատարյալ հավաստիքը։

Ձեզ խ. հարգ. Ե. Լալայան

13 թ. 14 դեկտ.
Թիֆլիս

P. S. Պայմանը նույնն է՝ Հանդեսի երեսը 1 ռ. 50 կ.

Հայկական ՍՍՌ Մատենադարան, արխիվային բաժին, Մաքսուդյանի արխիվ. թղթ. 25, վավ. 463։

* * *

Բարձրապատիվ Հայր Մեսրոպ

Խոստացար էջմիածնից ուղարկել Ձեր հոդվածը, մինչև այժմ չկա, հատուկ խնդրում եմ, որ հաճիք անմիջապես ուղարկել, Ձեր հոդվածի պատճառով Հանդեսը ուշանում է, ամեն օր սպասում ենք։

Խորին հարգանք
Ե. Լալայան

1914 թ. 23 հուն.
Թիֆլիս

Հայկական ՍՍՌ Մատենադարան, արխիվային բաժին, Մաքսուդյանի արխիվ. թղթ. 25, վավ. 469։

* * *

Արժանապատիվ Հայր

Պատահմամբ լսեցի, որ Դուք ընդօրինակում եք Աղթամարի ձեռագրների միջից Աղթամարի կաթողիկոսության պատմությունը և մտադիր եք հրատարակել. պարտք եմ համարում հայտնել, որ այդ ձեռագիրը ամբողջովին ես 1910 թվին ընդօրինակել եմ և այժմ տպվում է «Կարնո պատմության» մի այլ ձեռագրի հետ, հետևապես և իզուր պիտի աշխատեք, մանավանդ որ այդ մասին ես արդեն հայտնել եմ իմ կազմած Ձեռագրաց ցուցակի հառաջաբանում։ Նույնպես այդ ձեռագրների մանրանկարները իմ պատվերով հատուկ ինձ համար արդեն արտանկարել և հանձնել է ինձ պր. Թառլամազյանը։ Շուտով ես գալու եմ էջմիածին, կանսնվինք։

Խ. հարգ. Ե. Լալայան

1915 թ. 1/9
Աղեքսանդր.

Հայկական ՍՍՌ Մատենադարան, արխիվային բաժին, Մաքսուդյանի արխիվ. թղթ. 25, վավ. 487։

Երվանդ Լալայանի նամակը ազգագրագետ, Մատենադարանի նախկին դիրեկտոր Սենեքերիմ Տեր-Հակոբյանին

Հայոց
Ազգագրական
ընկերություն
17 փետրվ. 1916 թ.
Թիֆլիս

Սիրելի Սենեքերիմ

Ստացա բացիկդ և նրանից մի քանի օր հետո՝ նրանից առաջ գրած նամակդ.—վաղուց ուզում էի Ձեզ նամակ գրել, սակայն չեր հաջողվում. սկզբում ես տկարացա, մոտ երկու շաբաթ պառկեցի, հետո ես լավացա, տիկինը հիվանդացավ, և մինչև հիմա էլ պառկած է անկողնում. փետրվարի 1-ից ես չնայելով որ սաստիկ թույլ եմ և զգուշանում եմ դուրս գնալուց, այնուամենայնիվ սկսեցի աշխատել, երեք հոգի ամսականով են աշխատում, երկուսն էլ թերթի հաշվով. այստեղ Թիֆլիսումն էլ բավականաչափ գաղթականներ կան և գործը լավ է գնում, միայն արդեն այնքան հավաքել ենք, որ նոր բան շատ քիչ է պատահում, ուստի և՝ թեև շատ ենք պատմել տալիս, բայց քիչ ենք գրում։

Ձեր լակոնական բացիկից ոչինչ չհասկացա, ինչի՞ էիք գնացել Աշտարակ, կամ ինչո՞ւ եք գալու Աղեքսանդրապոլ, իրեր առնելո՞ւ, թե հեքիաթներ գրելու։ Ցանկալի էր, որ մի տեղեկություն տայիք, թե ի՞նչ արին Ձեր հանձնաժողովի անդամները, ի՞նչ շինեց պ. Սուրենյանը, այդտե՞ղ է, ե՞րբ պիտի վերադառնա։ Ցանկալի էր իմանալ և Ձեր մտադրությունը, գնալո՞ւ եք Մոսկվա թե չեք գնալու՝ մեր հանդիպումից տիկնոջ սենյակը վարձե՞մ Ձեզ համար. ի՞նչ խելք է մնալ էջմիածնում, երբ ճեմարանը բացվելու չէ։

Ես մտադիր եմ մարտի սկզբին գնալ, իհարկե խմբովս, կամ Նոր-Բայազետ և կամ Գանձակի գավառ, միայն վախենում եմ տարածված հիվանդություններից. մեր տված մի զոհը չափազանց տխուր ազդեցություն է թողել, ուստի և՝ դժվարանում ենք նորից գյուղեր գնալ։ Շատ կխնդրեի, որ գրեիք անմիջապես, թե Սմբատ Տեր Ավետիսյանի Վանից ուղարկած 1118 ձեռագրները հասա՞ն էջմիածին, երբ ստացվեն, պետք է դամ համեմատեմ իմ կազմած ցուցակի հետ։

Մաքսուդյանի հետ մեր բանակռիվը կարդացի՞ք, երևի նորից կսկսենք, երբ նրա կրքոտ գրախոսությունը Արարատում լույս տեսնի, խե՛ղճ Բաբկենը խոստացել էր չտպել...[2]։

Հա՛, քանի որ այդքան շատ շորեր եք հավաքել, էլ ինչի՞ Տ. Մարտիրոսյանին նեղացնենք, թե նրա տված գումարով գնված շորերը չեք ուղարկելու, մի կերպ հարթեցեք և այս։

Ի վերջո, եթե չեք գնալու Մոսկվա, եկեք Թիֆլիս, իհարկե մեզ մոտ, ի՞նչ եք մնացել այդտեղ։

Շատ բարև տիկնոջից և ինձնից։

Ձեր Ե. Լալայան

Հայկական ՍՍՌ Մատենադարան, արխիվային բաժին.
Ս. Տեր-Հակոբյանի արխիվ, թղթ. 76, վավ. 17։

---

2 Բազմակետերը տեքստինն են։

Մեծ. Պ. Սենեքերիմ Տեր Հակոբյանին

Հայոց
Ազգագրական ընկերություն՝
14 մարտի 1916 ամի
Թիֆլիս

Մեծարգո Պարոն

Պատիվ ունինք հայտնելու Ձեզ, Մեծարգո Պարոն, որ Հայոց Ազգագրական ընկերության խմբագրական Մասնաժողովս, ի նկատ առնելով, որ դուք Ձեր գիտական պատրաստությամբ կարող եք նպաստել ընկերությանս գիտական գործունեության, ընտրեց Ձեզ ընկերությանս աշխատակից անդամ։

Նախագահ խմբագր. Մասնաժողովի՝ Ե. Լալայան
Անդամ-քարտուղար՝ Լ. Մելիքսեթ-Բեկ

Ծանոթ.—Ընկերության կանոնադրությամբ աշխատակից անդամներին ընտրում է խմբագրական Մասնաժողովը (պ. 9) այն անձերից, որոնք իրենց գիտական պատրաստությամբ կարող են նպաստել ընկերության գիտական գործունեության (պ. 6), նրանք պարտավոր չեն վճարելու անդամավճար (պ. 11). միայն նրանք հրավիրվում են խմբագրական Մասնաժողովի կազմած մասնագիտական դրույցներին և դասախոսություններին, ինչպես նաև այն հոդվածների ընթերցման, որ տպագրվելու են ընկերության օրգանում։

Հայկական ՍՍՌ Մատենադարան, արխիվային բաժին,
Սենեքերիմ Տեր-Հակոբյանի արխիվ, թղթ. 76, վավ. 18։

* * *

Սիրելի Սենեքերիմ

Ինչո՞ւ մինչև այժմ չպատասխանեցիր Թորամանյանի և Դարեգին եպիսկոպոսի նեղատիվների մասին, խնդրում եմ շուտով պատասխանեք։

Ես Լանսերևին նկարել եմ տալու 10 նկար՝ ցանկանալով լրացնել հայ տարազների ժողովածուն, խնդրում եմ հայտնես, թե քո կարծիքով էլի ինչ տարազներ պետք է նկարել տալ, գուցե թանգարանիդ տարազների մեջ կան այնպիսիք, որ արժեն նկարել։

Բարևս հարգ. Տիկնոջը.

Քո Ե. Լալայան

Խնդրում եմ վերադարձնես «Հայ-Տարազը»։

12/1—27 թ.
Երևան

Հայկական ՍՍՌ Մատենադարան,
կաթ. դիվան, թղթ. 239, վավ. 241։

* * *

Սիրելի Սենեքերիմ

Մոտ 3 շաբաթ առաջ Ձեզ մի նամակ եմ գրել և խնդրել ուղարկել ինձ «Записки археологического общества» (коммисии) № 16 գիրքը, որտեղ կա Մառի զեկուցումը իր այն պեղումների մասին, որ գտնվում են Ձեր թանգարանում. գրած էի նաև, որ եթե Մատենադարանումդ չկա այդ հրատարա-

կությունը, Գարեգին եպիսկոպոսն ունի։ Այդ նամակին պատասխան չստացա։ Դա շատ հարկավոր էր, որովհետև իմ պեղումների մասին աշխատությունս ներկայացրել եմ Մելքոնյան կտակի հանձնաժողովին՝ տպագրության։ Ի դեպ, Հակոբյանը ինձ ասաց, որ Ձեզ նամակ է գրել՝ վերցնել իրենից այդ աշխատությունը և գրավոր զեկուցում տալ, ստանալով թերթին 8 ռ. վարձատրություն, երեկ մոտն էի, ասաց թե չնայելով, որ մի ամբողջ ամիս է անցել, դեռ չեք վերցրել, իսկ ես սաստիկ շտապում եմ, որովհետև վարձատրությունը ավանսով ստանալու եմ և գնալու բժշկվելու։ Խնդրում եմ այլևս մի՛ հապաղիր, ե՛կ, վերցրու և տուր զեկուցումդ, որ ինչ անելու են անեն։

Եթե ուրիշ տեղեկություններ ունեք Մառի պեղումների մասին և կամ ոչ թե 16 գրքում, այլ մի ուրիշ գրքումն է այդ հրատարակությունը, խնդրում եմ նայես և ուղարկես։

Հարգանքիս կատարյալ հավաստիքը և բարևները հարգելի տիկնոջը։

Ձեր Ե. Լալայան

1929 թ. 25/3
Երևան

Հայկական ՍՍՌ Մատենադարան, արխիվային բաժին,
Սենեքերիմ Տեր-Հակոբյանի արխիվ, թղթ. 76, վավ. 54։

А. А. Адамян

НЕОПУБЛИКОВАННЫЕ ПИСЬМА ЕРВАНДА ЛАЛАЯНА

Резюме

В архивных фондах Института древних рукописей им. Маштоца (Матенадаран) при Совете Министров Армянской ССР хранится переписка Ерванда Лалаяна с некоторыми видными арменоведами, имевшая место в период с 1886 по 1927 гг.

Из опубликованных писем становится ясным, с какими трудностями приходилось встречаться Е. Лалаяну при осуществлении издания армянского этнографического журнала. Е. Лалаян постоянно заботился о сплочении вокруг указанного журнала крупных арменоведов, которые своими статьями и исследованиями способствовали развитию армянской фольклористики, этнографии, историографии, языкознания и т. д. Об этом свидетельствуют его письма Г. Овсепяну, К. Срапяну, Г. Тер-Мкртчяну, С. Тер-Акопяну и другим.

Некоторые письма содержат интересные сведения о кипучей исследовательской деятельности Лалаяна в области этнографии, а также ряд ценных биографических данных.